


ԵԱՀԿ/Ժողովրդավարական հաստատությունների և  
մարդու իրավունքների գրասենյակ  
Ընտրությունների դիտորդական առաքելություն  
Հայաստանի հանրապետություն  
Խորհրդարանական ընտրություններ, մայիսի 6, 2012թ.



ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ No. 1  
մարտի 22-ապրիլի 2, 2012թ.

ապրիլի 5, 2012թ.

## I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

- Մահմանադրության դրույթներին համաձայն, Հայաստանի հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը 2012թ. փետրվարի 23-ին հայտարարեց, որ Խորհրդարանական ընտրությունները տեղի են ունենալու մայիսի 6-ին: Խառը ընտրական համակարգով ընտրվելու են Ազգային ժողովի 131 անդամ:
- Թեկնածուների գրանցումը, որն ավարտվել է ապրիլի 1-ին, համապարփակ էր: Ութ կուսակցություն և կուսակցությունների մեկ դաշինք գրանցվել են ըստ համամասնական ընտրակարգի, և 155 թեկնածու գրանցվել են 41 ընտրատարածքներում ըստ մեծամասնական ընտրակարգի: Գրանցված բոլոր թեկնածուներից մոտավորապես 237-ը (մոտ 20 տոկոսը) կանայք են:
- Ընտրական նոր Օրենսգիրքը ընդունվել է 2011թ. մայիսին: Օրենսգիրքը գնահատվել է որպես ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու հաստատուն և ընգրկուն կառույց, սակայն որոշ հատվածներ դեռևս բարելավման կարիք ունեն:
- Ընտրությունները նախապատրաստվում և անցկացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ-ի), 41 ընտրատարածքային հանձնաժողովների և 1,982 տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ակտիվորեն պատրաստվում է ընտրություններին և պահպանում օրենքով սահմանված բոլոր ժամկետները:
- Գրանցված ընտրողների թիվը 2.5 միլիոն է: Ընտրողները հնարավորություն ունեն ստուգել ընտրացուցակներում իրենց գրանցումը, օգտվելով նաև համացանցից, և կարող են պահանջել ընտրացուցակներում լրացումներ և ուղղումներ կատարել: Բազմաթիվ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հետ հանդիպող պատկան մարմինների ներկայացուցիչներ իրենց մտահոգությունն են հայտնել ընտրացուցակների որակի վերաբերյալ, որը, ըստ իշխանությունների ներկայացուցիչների, շարունակաբար բարելավվում է:
- Քաղաքական կուսակցությունները և թեկնածուները ակտիվորեն նախապատրաստվում են պաշտոնական նախընտրական քարոզարշավին, որը սկսվելու է ապրիլի 8-ին: Ըստ Ընտրական նոր օրենսգրքի, խստացվել է ընտրական

քարոզարշավի ֆինանսավորման կանոնները եւ սահմանվել են քարոզարշավի ծախսերի ավելի բարձր սահմաններ:

- Ըստ Ընտրական օրենսգրքի, հեռարձակող հանրային լրատվամիջոցներով տրամադրում են անվճար հեռարձակման հնարավորություն, եւ պարտադրում են բոլոր հեռարձակողներին ապահովել ոչ խտրական պայմաններ բոլոր թեկնածուների համար, անկողմնակալ եւ գնահատականներից զերծ տեղեկատվություն ներկայացնել իրենց լրատվական հաղորդումներում: Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը անցկացնում է բոլոր քարոզչություն հեռարձակում իրականացնող հեռուստառադիո ընկերությունների մշտադիտարկում:
- Մինչ այժմ ընտրությունների հետ առնչվող մոտ 40 բողոքների քննարկումը մերժվել է՝ հիմնականում հիմք ընդունելով, որ դիմումատուները նման բողոք ներկայացնելու իրավունք չունեն կամ իրավասու չեն:
- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն սկսել է իր աշխատանքները Երեւանում մարտի 22-ին, այն բաղկացած է 14 անդամ ունեցող հիմնական անձնակազմից եւ 24 երկարաժամկետ դիտորդներից, որոնք տեղակայվել են ամբողջ հանրապետության 10 վայրերում:

## II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2012թ, փետրվարի 23-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը մայիսի 6-ը հայտարարել է Խորհրդարանական ընտրությունների օր: Ելնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի հրավերից եւ հիմնվելով Կարիքների Գնահատման Առաքելության առաջարկությունների վրա, որը անցկացվել է հունվարի 30-ից փետրվարի 1-ը<sup>1</sup>, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) մարտի 22-ին հաստատեց Ընտրությունների դիտորդական առաքելությունը (EOM, ԸԴԱ): ԸԴԱ-ն, որը ղեկավարում է Ռադմիլա Շեկերինսկան, ունի 14 անդամներից բաղկացած հիմնական անձնակազմ եւ 24 երկարաժամկետ դիտորդներ (ԵԴ), որոնք տեղակայվելու են հանրապետության 10 վայրերում: ԸԴԱ-ի անդամները ընտրվել են ԵԱՀԿ անդամակցող 23 պետություններից: Անդամակցող պետություններից պահանջվել է տեղակայել 250 կարճաժամկետ դիտորդներ, որոնք հետեւելու են քվեարկությանը, հաշվարկին եւ քվեարկության արդյունքների աղյուսակավորմանը:

## III. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Վերջերս զգալի բարեփոխումներ են իրականացվել ընտրությունների հետ կապված օրենսդրական դաշտում: 2011թ. մայիսի 11-ին ընդունվել է Ընտրական նոր օրենսգիրք,

---

<sup>1</sup> Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Կարիքների գնահատման առաքելության զեկույցը <http://www.osce.org/odihr/elections/88245>.

առաջիկա ընտրություններից բավական ժամանակ առաջ<sup>2</sup>: Այն, ընդհանուր առմամբ, գնահատվել է որպես ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու հաստատուն եւ ընգրկուն շրջանակ: Նոր Օրենսգրքում ընդգրկված են մի շարք բարեփոխումներ՝ ընտրական գործընթացի տարբեր ասպեկտների հետ կապված, որոնցից մի մասը հիմնված է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի եւ Եվրոխորհրդի Վենետիկյան հանձնաժողովի նախկինում ներկայացված առաջարկությունների վրա, սակայն օրենսգրքում կան հատվածներ, որոնք բարելավումների կարիք ունեն: Ընտրական նոր օրենսգրքի ընդունումից հետո, ԿԸՀ-ն հրապարակել է սահմանված կարգի վերաբերյալ մի շարք կանոնակարգումներ եւ իրավական մեկնաբանություններ:

Ընտրությունների ոլորտին առնչվող այլ օրենսդրական փաստաթղթերի թվում են 2011թ. ընդունված Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը եւ Հավաքների ազատության մասին նոր օրենքը: 2011թ. փոփոխություններ են կատարվել Վարչական իրավախախտումների օրենսգրքում եւ Քրեական օրենսգրքում, ըստ որի բարձրացվել են ընտրությունների ժամանակ կատարված իրավախախտումների համար նախատեսված տուգանքների չափերը եւ ազատագրված ժամկետները, ինչպես նաեւ տեղ են գտել ընտրությունների հետ կապված իրավախախտումների նոր սահմանումներ: Վարչական վարույթի օրենսգիրքը, Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին եւ Սահմանադրական դատարանի մասին օրենքները կանոնակարգում են ընտրությունների հետ կապված պաշտոնպես գրանցված վեճերի բոլոր ոլորտները:

Խորհրդարանական ընտրությունները անկացվում են գուգահեռաբար ընտրական խառը համակարգով: Ազգային ժողովի 131 պատգամավորներից 90-ը ընտրվում են ամբողջ հանրապետության համամասնական ընտրակարգով: Մանդատներին արժանանալու համար կուսակցությունները պետք է անցնեն վավեր ձայների 5 տոկոսի շեմը, իսկ դաշինքները պետք է ստանան ձայների առնվազն 7 տոկոսը: Մնացած պատգամավորները ընտրվում են ըստ մեծամասնական ընտրակարգով 41 ընտրատարածքներում<sup>3</sup>:

#### IV. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Խորհրդարանական ընտրությունները կառավարվում են ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգով, որը բաղկացած է Կենտրոնական ընտրական հանձնաժողովից (ԿԸՀ), տասը *մարզերում* (շրջաններում) եւ Երեւան քաղաքում տեղակայված 41 ընտրատարածքային հանձնաժողովներից (ԸՀ-ներ) եւ 1,982

<sup>2</sup> Ազգային ժողովի խնդրանքով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) հետ համատեղ Ընտրական նոր օրենսգրքի իրավական ուսումնասիրություն է կատարել, տե՛ս <http://www.osce.org/odihr/elections/84269>

<sup>3</sup> 2012թ. հունվարի վերջում Ժառանգություն եւ Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) ընդդիմադիր կուսակցությունները օրինագիծ ներկայացրեցին, առաջարկելով բացառապես համամասնական ընտրակարգի կիրառում: Օրինագիծը մերժվեց խորհրդարանի կողմից:

Խորհրդարանական ընտրություններ, մայիսի 6, 2012թ.

Միջանկյալ զեկույց N 1 (մարտի 22–ապրիլի 2, 2012թ.)

տեղամասային ընտրական հանձնաժողովներից (ՏՀՀ-ներ)<sup>4</sup>: Ընտրական բոլոր հանձնաժողովները բաղկացած են յոթ անդամներից, կուսակցությունները, դաշինքները եւ թեկնածուները, որոնք մրցակցում են ընտրություններում, լիազորված են վստահված անձ նշանակելու: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿՀՀ) եւ յուրաքանչյուր ընտրատարածքային հանձնաժողովի (ԸՀՀ) առնվազն երկու անդամ պետք է պատկանեն ոչ բավարար ներկայացություն ունեցող սեռին:

ԿՀՀ-ը իր ներկայիս կազմով նշանակվել է 2011թ. հուլիսին: Ընտրական օրենսգրքի անցումային դրույթների համաձայն, ԿՀՀ-ի երկու անդամներ նշանակվել են երեք տարի ժամկետով, երեքը՝ հինգ տարի, եւ երկուսը՝ յոթ տարի ժամկետով: Հետագայում ԿՀՀ-ի անդամները նշանակվելու են վեց տարի ժամկետով:

Թվով 41 ԸՀՀ-ները (յուրաքանչյուր մեծամասնական ընտրատարածքի համար մեկ հանձնաժողով) մշտական մարմիններ են, որոնց անդամները նշանակվում են ԿՀՀ-ի կողմից, ԸՀՀ-ի անդամ դառնալու համար ինքնաառաջադրված քաղաքացիներից: ԿՀՀ-ը նշանակել է ԸՀՀ-ների ներկայիս կազմը 2011թ. օգոստոսին: Սույն զեկույցի պատրաստման պահին ԸՀՀ-ի կազմում կար երկու թափուր տեղ:

1,982 ընտրական տեղամասերում ՏՀՀ-ները կազմակերպելու են քվեարկությունը եւ քվեների հաշվարկը: ՏՀՀ-ի երկու անդամները նշանակվում են համապատասխան ԸՀՀ-ի կողմից. ներկայումս Ազգային Ժողովում ներկայացություն ունեցող յուրաքանչյուր կուսակցություն կամ դաշինք կարող է նշանակել ՏՀՀ-ի մնացած հինգ անդամներից մեկին: Նշանակումների վերջնաժամկետը ապրիլի 11-ն է: Այդ ժամկետից հետո մնացած թափուր տեղերը զբաղեցվելու են ԸՀՀ-ի նախագահի ընտրությամբ: Նշանակվելու համար ՏՀՀ-ների անդամները պետք է ստուգարք հանձնեն եւ ԿՀՀ-ի որակավորման վկայագիր ստանան:

ԿՀՀ-ների եւ ԸՀՀ-ների նախագահները, իրենց տեղակալները եւ քարտուղարները ընտրվում են հանձնաժողովի անդամներից: ՏՀՀ-ների նախագահների եւ քարտուղարների պաշտոնները բաշխվում են քաղաքական կուսակցությունների եւ դաշինքների ներկայացուցիչների միջեւ՝ Ազգային Ժողովում նրանց ունեցած մանդատների համաձայն:

ԿՀՀ-ը ակտիվորեն պատրաստվում է առաջիկա ընտրությունների անցկացմանը եւ պահպանում օրենքով սահմանված ժամկետները: ԿՀՀ-ը պարբերաբար նիստեր է կազմակերպում, որոնք բաց են լրատվամիջոցների եւ դիտորդների համար: ԿՀՀ-ը նաեւ տեղադրում է նիստերի օրակարգը եւ ընդունված որոշումները իր էլեկտրոնային էջում : ԿՀՀ-ն վերապատրաստման դասընթացներ է կազմակերպում ստորադաս հանձնաժողովների, ՏՀՀ ապագա անդամների եւ տեղական դիտորդների համար: ԸՀՀ-ի անդամները վերապատրաստվել են փետրվարին, իսկ ՏՀՀ-ի անդամների վերապատրաստման դասընթացները անկացվելու են ապրիլի վերջին:

<sup>4</sup> Մեկ ընտրական տեղամասն ունի մինչեւ 2,000 քվեարկող:

## V. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

ՀՀ Ոստիկանության Անձնագրային և Վիզաների վարչությունը (ԱՎՎ) պատասխանատու է ըտրողների ռեգիստրի պահպանման համար, որը հիմնված է բնակչության պետական ռեգիստրի տվյալների վրա<sup>5</sup>: Ընտրացուցակները վերցվում են ընտրողների ռեգիստրից, որը հիմնված է քաղաքացիների գրանցված բնակության վայրի վրա:

Նախնական ընտրացուցակները տեղադրվել են ԱՎՎ եւ ԿԸՀ-ի վեբ կայքերում, դրանք նաեւ պետք է առկա եւ տեսանելի լինեն ընտրական տեղամասերի մոտակայքում, որպեսզի ընտրողները կարողանան ստուգել իրենց գրանցումը<sup>6</sup>: ԱՎՎ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ մարտի 27-ի դրությամբ, գրանցվել են 2,485,844 ընտրողներ, 157,000 ընտրող ավելի, քան 2008 նախագահական ընտրությունների ժամանակ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ հետ համագործակցող պատկան մարմինների բազմաթիվ ներկայացուցիչներ իրենց մտահոգությունն են հայտնել ընտրացուցակների որակի, ինչպես նաեւ արտասահմանում բնակվող մեծ քանակով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ, որոնց անունները դեռեւս առկա են ընտրացուցակներում, եւ որի միջոցով կարելի է դիտավորյալ ավելացնել գրանցված քվեարկողների թիվը<sup>7</sup>: Իշխանության ներկայացուցիչները պնդում են, որ բնակչության եւ քվեարկողների ռեգիստրների որակը շարունակաբար բարելավվում է, որի արդյունքում աճում է քվեարկողների թիվը, դրան գումարվում են այլ գործոններ, ինչպիսին են 18 տարեկան դարձած քաղաքացիների եւ ՀՀ քաղաքացիություն ստացած սփյուռքահայերի թիվը: Այն քաղաքացիները, որոնք գրանցված բնակություն չունեն Հայաստանի Հանրապետությունում, ընտրություններից յոթ օր առաջ կարող են դիմել ԱՎՎ-ն ՀՀ-ում իրենց ներկայիս բնակության վայրում քվեարկողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու համար: Նույն վերջնաժամկետը կգործի նաեւ այն քվեարկողների համար, որոնք պլանավորում են քվեարկել ոչ թե իրենց գրանցման վայրում, այլ այլ համայնքում: Այն քվեարկողները, որոնք չեն ընդգրկվել ընտրացուցակում, նույնպես կարող են դիմել այնտեղ ընդգրկվելու համար ընտրություններից չորս օր առաջ, ինչպես նաեւ ընտրությունների օրը՝ մինչեւ քվեարկության ավարտը:

Հատուկ ընտրացուցակներ են կազմվում գորամասերի, նախնական կալանավայրերում

---

<sup>5</sup> ԱՎՎ-ը պատասխանատու է նաեւ բնակչության պետական ռեգիստրի պահպանման համար:

<sup>6</sup> Քվեարկողների ռեգիստրը տեղադրվել է ԿԸՀ-ի վեբ կայքում մարտի 26-ին, իսկ քվեարկողների ցուցակները ըստ ընտրատարածքի, տեղադրվել են ԱՎՎ-ը վեբ կայքում մարտի 27-ին, համաձայն Ընտրական օրենսգրքի դրույթների պահանջի: Առաջին անգամ է, որ կարելի է որոնում կատարել քվեարկողների ռեգիստրում, եւ կարելի է ներբեռնել ըստ ընտրատարածքների ներկայացված քվեարկողների ցուցակները :

<sup>7</sup> Ըստ օրենքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք երկրից դուրս են գտնվում վեց ամսից ավել ժամկետով, պետք է տեղեկացնեն համապատասխան հյուպատոսարանները եւ հանվեն ՀՀ-ի գրանցումից :

Խորհրդարանական ընտրություններ, մայիսի 6, 2012թ.

Միջանկյալ զեկույց N 1 (մարտի 22–ապրիլի 2, 2012թ.)

գտնվող անձանց, բնակության վայրից հեռու տեղակայված ոստիկանության, ազգային անվտանգության անձնակազմի, երկրից դուրս գտնվող դիվանագիտական եւ հյուպատոսական գրասենյակների, արտասահմանում գտնվող Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց համար: Արտասահմանում տեղակայված դիվանագիտական կորպուսի 238 ծառայող եւ նրանց ընտանիքի անդամներ քվերակելու են համացանցի միջոցով մինչեւ մայիսի 6-ը:

## VI. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄ

Թեկնածուների առաջարդման վերջնաժամկետը մարտի 22-ն էր, մինչդեռ թեկնածուների գրանցումը ավարտվել է ապրիլի 1-ին: ԿԸՀ-ը գրանցել է համամասնական ընտրակարգով<sup>8</sup> առաջադրված քաղաքական կուսակցությունների կամ դաշինքների թեկնածուների ցուցակները, իսկ ԸԸՀ-ները՝ մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուներին:

Գրանցվելու համար թեկնածուն պետք է ներկայացնեք կուսակցության (դաշինքի դեպքում, կուսակցությունների) կանոնադրության պատճեն, ինչպես նաեւ յուրաքանչյուր թեկնածուի անձնական տվյալները եւ հինգ տարվա քաղաքացիության եւ Հայաստանի Հանրապետությունում բնակության մասին վկայող պաշտոնական փաստաթղթերը:

Ընտրությունների համամասնական ցուցակով առաջադրված կուսակցությունները եւ դաշինքները պետք է վճարեին 8 միլիոն ՀՀ դրամ ընտրագրավ<sup>9</sup>, մինչդեռ մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների ընտրագրավը կազմում էր 1 միլիոն ՀՀ դրամ<sup>10</sup>: Ընտրագրավը վերադարձվում է այն դեպքում, եթե կուսակցությունը կամ դաշինքը Ազգային ժողովում մանդատներ է ստանում (համամասնական ընտրակարգ), կամ թեկնածուն ընտրվում կամ ստանում է ձայների առնվազն հինգ տոկոս (մեծամասնական ընտրակարգ):

Թեկնածուների ցուցակի կամ թեկնածուի գրանցման մերժման համար հիմք են ծառայում հետեւյալը՝ եթե թեկնածուների ցուցակը պարունակում է չափից քիչ կամ չափից ավելի անուններ կամ այն չի համապատասխանում Ընտրական օրենսգրքի գենդերային պահանջներին, քաղաքական կուսակցության գործունեության դադարեցումը կամ լուծարումը, կուսակցությունների դաշինքում միայն մեկ

<sup>8</sup> Ընտրական օրենսգրքի 106.2 Հոդվածի համաձայն, դաշինքը պետք է բաղկացած լինի առնվազն երկու քաղաքական կուսակցություններից: Թեկնածուների ցուցակը պետք է պարունակի առնվազն 25 եւ առավելագույնը 270 թեկնածու:

<sup>9</sup> Նվազագույն աշխատավարձի 8,000-ապատիկը, կամ մոտավորապես 15,355 եվրո (այս թիվը սխալմամբ էր ներկայացվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Կարիքների գնահատման առաքելության զեկույցում): Համաձայն օրենքի, հաշվարկներում որպես հիմք օգտագործելու համար նվազագույն ամսեկան աշխատավարձը 1,000 ՀՀ դրամ է: Փաստաթղթի պատրաստման ժամանակ փոխանակման պաշտոնական դրույքաչափը եղել է 1 եվրո : 521 ՀՀ դրամ:

<sup>10</sup> Նվազագույն աշխատավարձի 1,000-ապատիկը կամ մոտավորապես 1,919 եվրո:

կուսակցություն մնալու փաստը, ընտրագրավի չվճարելը, առաջադրման փաստաթղթերի կեղծիքները կամ թեկնածուի՝ ընտրվելու պահանջներին չբավարարելու դեպքերը:

Գրանցման գործընթացը համապարփակ էր: Ընդհանուր առմամբ, առաջիկա ընտրություններում մրցակցելու են 15 կուսակցություն եւ 1 դաշինք, գրանցվել են առաջադրված 1,206 թեկնածուից 1,171-ը (եւ՝ համամասնական, եւ՝ մեծամասնական ընտրակարգերով): Ութ կուսակցություն եւ մեկ դաշինք թեկնածուների ցուցակ են առաջադրել՝ ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցելու համար: ԿՀՀ-ը գրանցել է բոլոր ինը համամասնական ընտրակարգի ցուցակները՝ մերժելով երեք թեկնածուի<sup>11</sup>: Համամասնական ընտրակարգով առաջադրված յոթ թեկնածու ինքնաբացարկ են հայտնել նախքան ցուցակների գրանցումը: Ընտրությունների մեծամասնական ընտրակարգով գրանցվել են 155 թեկնածու, որոնցից 89 առաջադրվել են 13 կուսակցությունների կողմից<sup>12</sup>, իսկ 66-ը՝ ինքնաառաջադրվել են: Մեծամասնական ընտրակարգով ընտրարշավում մասնակցող երկու թեկնածու մերժվել են, իսկ 23-ը՝ ինքնաբացարկ են հայտնել<sup>13</sup>:

Ներկայիս Ազգային ժողովի 131 պատգամավորներից 10-ը կին են (7.6 տոկոս): Ընտրական օրենսգրքի համաձայն, համամասնական ցուցակների գեղեցկային շեմը կազմում է 20 տոկոս, որի պահանջներին համապատասխանում են գրանցված կուսակցությունները եւ կուսակցությունների դաշինքները<sup>14</sup>: Համամասնական ցուցակներում գրանցված 1,016 թեկնածուներից 225-ը կին են (22 տոկոս): Մեծամասնական ընտրակարգով առաջադրված 155 թեկնածուներից 12-ը կին են (7.7 տոկոս):

Իշխող կոալիցիոն կուսակցությունների թեկնածուների ցուցակներում ընդգրկված են հայտնի քաղաքական գործիչներ եւ բարձրաստիճան պաշտոնյաներ: ՀՀԿ համամասնական ցուցակը գլխավորում է նախագահ Սերժ Սարգսյանը, իսկ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Ազգային ժողովի խոսնակ Սամվել Նիկոյանը եւ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը զբաղեցնում են բարձր դիրքեր: ԲՀԿ-ի ցուցակն ընդգրկում է երեք նախարար եւ Ազգային ժողովի 21 պատգամավոր: Ընդհանուր

<sup>11</sup> Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ), Բարգավաճ Հայաստան (ԲՀԿ), Օրինաց Երկիր կուսակցություն (ՕԵԿ), ՀՅԴ, Ժառանգություն, Հայաստանի Դեմոկրատական կուսակցություն (ՀԴԿ), Հայաստանի կոմունիստական կուսակցություն (ՀԿԿ), Միավորված հայեր կուսակցություն (ՄՀԿ) եւ Հայ Ազգային Կոնգրես (ՀԱԿ) դաշինք:

<sup>12</sup> ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ, Ժառանգություն, ՀԿԿ, Ժողովրդավարական հայրենիք կուսակցություն, Ժողովրդավարական ուղի կուսակցություն, Լիբերալ կուսակցություն, Հայաստանի մարքսիստական կուսակցություն, Հայաստանի համազգային շարժում, Ժողովրդական կուսակցություն եւ Հանրապետություն կուսակցություն:

<sup>13</sup> Երկու մերժված թեկնածուներն են Խաչատուր Սուքիասյանը եւ Աշոտ Ճանճապանյանը, երկուսն էլ ինքնաառաջադրվել էին: Պրն. Սուքիասյանին մերժվել է հինգ տարվա ընթացքում ՀՀ-ում բնակվելու պահանջը չբավարարելու համար, իսկ պրն. Ճանճապանյանը չի վճարել ընտրագրավի գումարը:

<sup>14</sup> Յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չի կարող գերազանցել ցուցակի ամեն մի հինգ թեկնածուի ամբողջական խմբի 80 տոկոսը, սկսած ցուցակի երկրորդ տողից:

առմամբ, Ազգային ժողովի ներկայիս 131 պատգամավորներից մոտավորապես 94-ը (72 տոկոսը) մտադիր են վերընտրվել: Բոլոր տասը մարզայեցները ներգրավված են համամասնական ցուցակներում (8-ը՝ ՀՀԿ-ի եւ 2-ը՝ ԲՀԿ-ի ցուցակում):

## VII. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ընտրական օրենսգրքի հոդված 18.1-ը սահմանում է նախընտրական քարոզչության համար ֆիքսված ժամանակահատված, որը ենթադրում է բոլոր թեկնածուների համար հավասար պայմաններ համապատասխան օրենքի կիրառմամբ: Նույն հոդվածում մասնավորապես սահմանվում է, որ քարոզչությունը չի սահմանափակվում քարոզարշավի համար նախատեսված պաշտոնական ժամանակահատվածով, բացառությամբ լրության օրը մինչև քվեարկությունը եւ քվեարկության օրը ներառյալ: Պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածը մեկնարկում է ապրիլի 8-ին եւ ավարտվում մայիսի 5-ին ժամը 00:00: Ընտրական օրենսգրքով երաշխավորվում է կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների եւ թեկնածուների նախընտրական քարոզարշավի անցկացման պետական աջակցությունը: Տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են նախընտրական քարոզարշավի միջոցառումներ անցկացնելու համար մրցակիցներին անվճար հիմունքներով եւ հավասար պայմաններով տարածքներ տրամադրել:

Կուսակցությունները ակտիվորեն նախապատրաստվում են պաշտոնական ընտրարշավին: ՀՀԿ-ն եւ ԲՀԿ-ն գումարել են իրենց կուսակցությունների համագումարները մարտի 10-ին եւ 17-ին համապատասխանաբար, եւ Ժառանգությունը՝ մարտի 2-ին: Մարտի 30-ին ՀԱԿ-ը հանրահավաք եւ երթ էր կազմակերպել, որին մասնակցել են մի քանի հազար մարդ:

## VIII. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

Ընտրական օրենսգրքը ապահովում է անվճար եթերաժամերի, նորություններում լուսաբանման եւ վճարովի գովազդների հնարավորությունը, ամրագրում է քարոզարշավի 24-ժամյա լրություն մինչև ընտրությունների մեկնարկը, արգելում է մինչև ընտրատեղամասերի փակումը հրապարակել էքզիթ փոլերի արդյունքները :

Հանրային հեռարձակողները՝ *Հանրային հեռուստատեսությունը եւ ռադիոն*, պարտավոր են տրամադրել անվճար եւ վճարովի եթերաժամեր: Համամասնական ընտրակարգով գրանցված ցուցակով քաղաքական կուսակցությանը կամ դաշինքին հանրային հեռուստատեսության Հ1 ալիքով 60 րոպե, եւ հանրային ռադիոյով 120 րոպե անվճար եթերաժամի իրավունք է տրվում: Բացի այդ, յուրաքանչյուր կուսակցություն կամ դաշինք կարող է գնել վճարովի եթերաժամեր մինչև 120 րոպե հանրային հեռուստատեսությամբ եւ 180 րոպե հանրային ռադիոյով<sup>15</sup>: Ապրիլի 2-ին ԿԸՀ-ն

<sup>15</sup> Կուսակցությունների կամ դաշինքների կողմից քաղաքական գովազդի համար մասնավոր հեռարձակողներից գնված եթերաժամերի սահմանափակում չկա:



Խորհրդարանական ընտրություններ, մայիսի 6, 2012թ.

Միջանկյալ զեկույց N 1 (մարտի 22–ապրիլի 2, 2012թ.)

խաղարկության միջոցով սահմանել է հեռուստատեսության եւ ռադիոյի անվճար եւ վճարովի եթերաժամերի ընթացքում կուսակցությունների եւ դաշինքների հանդես գալու հերթականությունը՝ համաձայն Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի: Հանրային հեռարձակող կազմակերպությունները հեռարձակելու են ընտրական քարոզչությունը ապրիլի 8-ից: Մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուներին իրավունք չի տրվում օգտվել հանրային հեռարձակող կազմակերպությունների տրամադրած անվճար կամ վճարովի եթերաժամերից: Ընտրական օրենսգրքի համաձայն՝ մասնավոր եւ հանրային հեռարձակողների միջոցով քաղաքական քարոզչության համար վճարովի ծառայությունների արժեքները հրապարակվել են մարտի 5-ին:

Ըստ Ընտրական օրենսգրքի՝ հանրային եւ մասնավոր հեռարձակողները պարտավորվում են ոչ խտրական պայմաններ ապահովել եւ իրենց նորությունների ծրագրերում անաչառ եւ անկողմնակալ տեղեկատվություն տրամադրել: Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) պատասխանատու է Ընտրական օրենսգրքի՝ լրատվամիջոցներին վերաբերող դրույթների իրականացումը վերահսկելու համար: Մարտի 16-ին ՀՌԱՀ-ը հրապարակել է ընտրական քարոզարշավի ընթացքում լրատվամիջոցների մոնիթորինգի իր մեթոդաբանությունը: Մոնիթորինգի միջոցով գնահատվելու է քաղաքական կուսակցություններին եւ դաշինքներին տրամադրվող անվճար եւ վճարովի եթերաժամերի ոչ խտրական սկզբունքը, նորություններում եւ տեղեկատվական ծրագրերում թեկնածուների եւ քաղաքական կուսակցությունների հանդեպ հեռարձակողների անաչառ, անկողմնակալ եւ հավասար վերաբերմունք ցուցաբերելու պարտավորության կատարումը: Մոնիթորինգի ենթակա լրատվամիջոցների ցուցակը պետք է դեռ հրապարակվի: Ըստ հանրային հեռարձակողների ներկայացուցիչների՝ ՀՌԱՀ-ը ներառելու է իր ծրագրերը մոնիթորինգի գործողություններում:

ՀՌԱՀ-ը լրատվամիջոցների մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված տվյալները պետք է ներկայացնի ԿԸՀ-ին ընտրական ժամանակահատվածում երեք անգամ՝ ապրիլի 17-ին, ապրիլի 27-ին եւ մինչեւ մայիսի 11-ը: Խախտումների դեպքում ՀՌԱՀ-ը կարող է դադարեցնել հեռարձակողների արտոնագրերը երեք նախազգուշացումից հետո<sup>16</sup>:

Մարտի 15-ին ԿԸՀ-ն փոփոխություններ է կատարել լրագրողների հավատարմագրման մասին որոշման երկու իրարամերժ հոդվածներում, որը մտահոգություն է առաջացրել լրագրողական կազմակերպություններում<sup>17</sup>: Ըստ ԿԸՀ-ի՝ մինչ այժմ լրագրողների հավատարմագրման որեւէ հայտ չի մերժվել :

<sup>16</sup> Հեռուստատեսության եւ ռադիոյի հեռարձակման մասին օրենքի Հոդված 55, բ:

<sup>17</sup> Ըստ 2012թ. հունվարի 31-ի ԿԸՀ թիվ 18 որոշման՝ լրագրողի հավատարմագրումը մերժվում է, եթե վերջինս տարածել է ԿԸՀ-ի գործունեություն մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը կամ լրագրողը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար եւ նրա դատապարտվածությունը հանված կամ վարված չէ:

Մարտի 27-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն սկսել է լրատվամիջոցների ընդլայնված մոնիթորինգ՝ քաղաքական եւ ընտրություններին առնչվող լուսաբանումների քանակական եւ որակական վերլուծություններ միջոցով<sup>18</sup>:

## IX. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԻՍՈՒՄՆԵՐ

Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել ավելի բարձր հանձնաժողովում, մինչդեռ ԿԸՀ-ի գործողությունների դեմ ուղղված դիմումները գտնվում են Վարչական դատարանի իրավասության ներքո: Ընտրացուցակների վերաբերյալ բողոքների որոշումները կայացվում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից, առանց բողոքարկման իրավունքի: Առաջիկա ընտրությունների ընթացքում 2008 թ. ստեղծված Վարչական դատարանը առաջին անգամ իրականացնելու է իր իրավասությունները ընտրությունների հետ կապված վեճերի ուղղությամբ: Ընտրական հանձնաժողովները կարող են դիմել Վարչական դատարան քաղաքական կուսակցությունների, դաշինքների, թեկնածուների գրանցումից հանման, քարոզարշավի կամ քարոզարշավի ֆինանսավորման ոլորտի ցանկացած իրավախախտումների դեպքերում: Ընտրությունների արդյունքների վերաբերյալ բողոքները գտնվում են բացառապես Սահմանադրական դատարանի իրավասության ներքո:

Ընդհանուր վարչական օրենքները, որոնք կանոնակարգում են պետական մարմինների որոշումների եւ գործողությունների դեմ ուղղված բողոքները, իրենց մեջ ներառում են տարբեր մակարդակի ընտրական հանձնաժողովների դեմ ուղղված բողոքները, եւ հնարավորություն են ընձեռում դրանք անմիջականորեն ներկայացնել Վարչական դատարան, շրջանցելով ավելի բարձր հանձնաժողովներին դիմելը, ինչպես սահմանված է Ընտրական օրենսգրքում: Ասպիտով, ավելի բարձր ընտրական հանձնաժողովի եւ Վարչական դատարանի միջեւ գոյություն ունի իրավասությունների համընկում: Այնուամենայնիվ, օրենքները ընթացակարգ են սահմանում այն դեպքերի համար, երբ բողոքները ներկայացվում միջաժամանակ եւ պետական ատյաններին, եւ դատարաններին: Ընտրությունների հետ կապված վեճերի՝ Վարչական դատարանի որոշումները վերջնական են:

Ապրիլի 1-ի դրությամբ, ԿԸՀ-ը ստացել է ավելի քան 30 բողոք: Դրանց ճնշող մեծամասնությունը ներկայացվել է մի անձի կողմից, որտեղ նա հիմնականում պնդում է, թե պետական պաշտոնյաները իրականացնում են քարոզարշավ<sup>19</sup>, դրանք բոլորը

<sup>18</sup> ԵԱՀԿ ԸԴԱ-ն վեց ազգային հեռուստաալիքների՝ 21 (հանրային հեռուստատեսություն), 22, Արմենիա TV, Շանթ TV, Երկիր Մեդիա, Կենտրոն TV, երկու ռադիոկայանների՝ հանրային ռադիո եւ Ռադիո Ազատ Եվրոպա/Ազատություն Ռադիոկայան եւ պետական օրաթերթի (Հայաստանի Հանրապետություն) քաղաքական եւ ընտրություններին վերաբերող լուսաբանման հիմնական եթերաժամերի (18:00–24:00) մոնիթորինգ է իրականացնում:

<sup>19</sup> Շատ բողոքներում պնդում էին, որ վարչապետը քարոզարշավում է ՀՀԿ-ն շրջաններում իր պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ: Երկու բողոքներում պնդում էին,

մերժվել են այն հիմնավորմամբ, որ մասնավոր անձինք իրավունք չունեն բողոքել հանրային ընտրական իրավունքների խախտման դեմ: Մնացած բոլոր բողոքները մերժվել են իրավասության բացակայության<sup>20</sup>, կամ այն պատճառով, որ նույն բողոքը գտնվում է դատարանի վարույթում, իսկ երկու բողոքներ մերժվել են ըստ էության<sup>21</sup>: Վարչական դատարանը ստացել է բազմաթիվ բողոքներ, որոնցից մեկը գտնվում է վարույթում, մնացած բոլորը մերժվել են դիմողի նման բողոք ներկայացնելու իրավունք չունենալու կամ անբավարար հիմքերով պահանջ ներկայացնելու հիմնավորմամբ<sup>22</sup> :

## X. ՏԵՂԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ

Կուսակցություններին չանդամակցող տեղական դիտորդները կարող են նշանակվել «ժողովրդավարության եւ մարդու իրավունքների պաշտպանության»<sup>23</sup> ոլորտում գործող հանրային ասոցիացիաների կողմից, եւ հավատարմագրվում են ԿԸՀ-ի կողմից: ԿԸՀ-ի կողմից տեղական դիտորդի որակավորում ստանալու համար անհատը պետք է նախապես հանձնաձև լինի ԿԸՀ-ի ստուգարքը: Մարտի 30-ի դրությամբ, տեղական 15 կազմակերպություն հավատարմագրվել են առաջիկա ընտրություններում որպես դիտորդ հանդես գալու համար: Այդ կազմակերպությունների կողմից հավատարմագրվել են 12,700-ից ավելի անհատ դիտորդներ: Հավատարմագրման վերջնաժամկետը ապրիլի 26-ն է:

Մինչ այժմ, ԿԸՀ-ը մերժել է չորս կազմակերպությունների իրավական պահանջներին չհամապատասխանելու համար<sup>24</sup> : Ըստ Ընտրական օրենսգրքի 30.5 հոդվածի, ԿԸՀ-ին լիազորություն է տրվում ետ վերցնել կազմակերպության հավատարմագիրը, եթե նրա դիտորդները աջակցում են ընտրություններին մասնակցող որեւէ կուսակցության, դաշինքի կամ թեկնածուի: Այնուամենայնիվ, ԿԸՀ-ը տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ մտադրություն չունի իրագործել վերոհիշյալ դրույթը, սակայն փոխարենը ետ կվերցնի անհատ դիտորդների հավատարմագրերը, եթե նրանք խախտեն Ընտրական օրենսգրքի դրույթները:

---

որ նախագահը օգտագործում է իր պաշտոնական վեբ կայքը ՀՀԿ-ն գովազդելու համար: Մի բողոքում պնդում էին, որ մարզպետը չարաշահում էր իր պաշտոնական դիրքը քարոզելով ինքն իրեն:

<sup>20</sup> Բազմաթիվ բողոքներում ընդդիմանում էին այլ պետական մարմիններին, ներառյալ Արդարադատության նախարարությունը, Ոստիկանությունը եւ ՀՌԱՀ-ին:

<sup>21</sup> Մի բողոքում քննարկվում էր թեկնածուի գրանցումը, պնդելով որ նա չի համապատասխանում հինգ տարի ՀՀ-ում բնակվելու պահանջին, իսկ մեկ այլ բողոքում պնդում էին, որ քարոզարշավը սկսել էին մինչև քարոզարշավի պաշտոնական մեկնարկը:

<sup>22</sup> Մի բողոքում ՀԿ-ի կողմից պահանջ էր ներկայացվում, որ քվեաթերթիկները ներառեն «բոլորին դեմ» տարբերակը:

<sup>23</sup> Ինչպես սահմանված է Ընտրական օրենսգրքի 29.1.3 Հոդվածով:

<sup>24</sup> Ընտրական օրենսգրքի 29.1.3 and 30.4 Հոդվածներ եւ ԿԸՀ-ի 2011թ. հուլիսի 29 No. 37–Ն որոշում:

## XI. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն պաշտոնապես սկսել է իր աշխատանքները 2012թ. մարտի 22-ին Երեւանում եւ մամլո ասուլիս է կազմակերպել: Առաքելության ղեկավարը հանդիպել է ԿԸՀ-ի նախագահի, Արտաքին գործերի նախարարի, Արդարադատության նախարարի, Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Սահմանադրական դատարանի նախագահի, Գլխավոր դատախազի, ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի ղեկավարի եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ: ԸՂԱ-ն նաեւ մշտական շփումներ է հաստատել ԿԸՀ-ի, ընտրական գործընթացում ներգրավված պետական հաստատությունների, ինչպես նաեւ քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: 24 երկարժամկետ դիտորդներ (ԵԴ) շփումներ են հաստատել շրջանային մակարդակով, ներառյալ ԸԸՀ-ները, պետական եւ տեղական իշխանությունների, կուսակցությունները եւ թեկնածուները, քաղաքացիական եւ շրջանային լրատվամիջոցների ներկայացուցիչները:

Ընտրության օրը դիտարկելու համար ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ին կմիանա ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովի (ԽՎ) պատվիրակությունը: ԵԱՀԿ-ի գործող նախագահի կողմից պրն. Ֆրանսուա-Քսավյե դե Դոննեան նշանակվել է կարճաժամկետ դիտորդական առաքելության ղեկավարման հատուկ համակարգող: Եվրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՎ) եւ Եվրոպայի խորհրդարանը (ԵԽ) նույնպես պլանավորում են դիտորդների պատվիրակություն ուղարկել ընտրությունները դիտարկելու համար:

*Սույն զեկույցի անգլերեն տարբերակը հանդիսանում է միակ պաշտոնական  
փաստաթուղթը*

*Առկա է հայերեն ոչ պաշտոնական թարգմանությունը*